Մարզպետի տեղակալ Վահե Վարդապետյանը խորհրդակցություն անցկացրեց գյուղոլորտի պատասխանատուների հետ 23.10.2013

Հոկտեմբերի 23-ին մարզպետի տեղակալ Վահե Վարդապետյանը Տավուշի մարզպետարանում խորհրդակցություն անցկացրեց մարզի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ: Խորհրդակցությանը ներկա էր ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Սամվել Գալստյանը: Քննարկվեցին հողերի նպատակային և արդյունավետ օգտագործմանը, ցանքատարածությունների ավելացմանը, 2013թ. աշնանացանի ընթացքին, 2014թ. գարնանացանի ցանքատարածությունների կանխատեսումներին /ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի/, 2013թ. գյուղմթերքների արտադրությանն ու ծավալներին վերաբերող և այլ հարցեր: